ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 27.06.2018թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ԱՄ-2018/78

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Մեր Անանյանս, ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10270-18 գրությամբ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ քաղաքաշինության կոմիտեի 15.05.2018թ. թիվ 02/16.4/2278-18 և 05.06.2018թ. թիվ 02/16.4/2618-18 գրությունների հիման վրա, 07.06.2018թ. թիվ 03/26-3/10270-18 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով նախաձեռնել «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին (այսուհետ՝ Ընթացակարգ) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. **<u>«Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>**

«Սպիտակ Կամար» ՍՊԸ-ն ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի սույն որոշումը կայացվելու օրվա դրությամբ որևէ դիրքորոշում չի ներկայացրել:

Ընկերությունը, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/78 ընթացակարգի շրջանակներում 11.06.2018թ. ժամը 11:10-ին և 13.06.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

3. **<u>ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>**

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն, ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 15.05.2018թ. թիվ 02/16.4/2278-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ քաղաքաշինության նախարարության «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև 31.07.2013թ. կնքվել է ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի ՀՀ քաղաքաշինության կոմիտեն 11.05.2018 թվականից միակողմ լուծել է Պայմանագիրը՝ մնացորդային 57 456 076 ՀՀ դրամ գումարի չափով:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ԱՄ-2018/78 ընթացակարգի շրջանակներում 11.06.2018թ. ժամը 11:10-ին և 13.06.2018թ. ժամը 11:20-ին հրավիրված նիստերի վերաբերյալ, 11.06.2018թ. ժամը 11:10-ի նիստին ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. ՍՑ-ԱՄ-2018/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՍՑ-ԱՄ-2018/78 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի (այսուհետ՝ Պատվիրատու) և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև 31.07.2013թ. կնքվել է «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի շինարարական աշխատանքների գնման պայմանագիր:

2. Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ն պարտավորվել է Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման աշխատանքները, իսկ Պատվիրատու «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա դիմաց:

3. Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքները ավարտել 05.12.2013թ.:

ՀՀ կառավարության 18.12.2014թ. N 1451-Ա որոշմամբ «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2015թ.:

4. «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2018թ. թիվ 02/16.4/2225-18 գրությամբ, «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը հայտնել է, որ Ընկերության կողմից Պայմանագրով սահմանված ժամկետում աշխատանքներն ամբողջությամբ չեն կատարվել, ուստի Պատվիրատուն հիմք ընդունելով Պայմանագրի 3.1.4 կետը՝ 11.05.2018թ. միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ մնացորդային 57 456 076 ՀՀ դրամ գումարի չափով:

5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Միեր Անանյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10270-18 գրությունը, ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեի 15.05.2018թ. թիվ 02/16.4/2278-18 և 05.06.2018թ. թիվ 02/16.4/2618-18 գրությունները և կից փաստաթղթերը, հայտնում եմ հետևյալը.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն. այն է՝ վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտականությունը:

Նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

«Գնումների մասին» ՀՕ-21-Ն օրենքի 57-րդ հոդվածի 3-րդ կետի համաձայն՝ սույն օրենքի պահանջները չեն տարածվում մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելն սկսած և չդադարած, ինչպես նաև կնքված և գործող գնման գործարքների վրա, իսկ դրանց հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների կնքման պահին գործող իրավական ակտերով:

«Գնումների մասին» ՀՕ-206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված*** կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած ***պարտավորություն,***

որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև 31.07.2013թ. կնքվել է «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի շինարարական աշխատանքների ձեռքբերման գնման պայմանագիր:

Պայմանագրի 1-ին կետի 1.1 ենթակետով «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ն պարտավորվել է պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել Պայմանագրի N 1 Հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի կառուցման աշխատանքները, իսկ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկը պարտավորվել է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա դիմաց:

Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 05.12.2013թ.: Մասնավորապես՝ Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման համար նախատեսվել են հետևյալ ժամկետները.

	Ուսումնական մասնաշենք (2013թ.)	սկիզբ	ավարտ
1.	Հողային աշխատանքներ	01.08.2013թ.	15.08.2013թ.
2	Հիմքեր	07.08.2013թ.	30.08.2013թ.
3	Պատեր, Ե/բետոնե կոնստրուկցիաներ	25.08.2013թ.	15.10.2013թ.
4	Միջնորմներ	15.09.2013թ.	20.10.2013թ.
5	Բացվածքներ	20.10.2013թ.	15.11.2013թ.
6	Ծածկ	15.09.2013թ.	25.10.2013թ.
7	Տանիք	25.10.2013թ.	05.12.2013թ.
8	Ընդամենը	01.08.2013թ.	05.12.2013թ.

Պայմանագրի ընդհանուր գինը սահմանվել է 419 973 260 ՀՀ դրամ:

Համաձայն կողմերի միջև 20.08.2013թ. կնքված թիվ 1, 09.09.2013թ. կնքված թիվ 2, 09.10.2013թ. կնքված թիվ 3, 14.11.2013թ. կնքված թիվ 4, 11.12.2013թ. կնքված թիվ 5, 16.12.2013թ. կնքված թիվ 6 հանձնման-ընդունման արձանագրությունների՝ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ն Պայմանագրի շրջանակներում կատարել է համապատասխանաբար՝ 10 414.242 հազ. ՀՀ դրամ, 8834. 896 հազ. ՀՀ դրամ, 11355.237 հազ. ՀՀ դրամ, 6 309.46 հազ. ՀՀ դրամ, 21206.07 հազ. ՀՀ դրամ, 5 007.322 հազ. ՀՀ դրամի աշխատանք:

Վերոհիշյալ թիվ 2-6-րդ հանձնման-ընդունման արձանագրություններով արձանագրվել է, որ Ընկերության կողմից խախտվել են Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամանակացույցը:

Պատվիրատուն «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին ուղղված 06.09.2013թ. թիվ ՀՍ/961-13 և 17.09.2013թ. թիվ ՀՍ/1001-13 գրություններով հայտնել է, որ Ընկերության կողմից խախտվում են Պայմանագրով նախատեսված ժամկետները և Ընկերության կողմից գ. Վարդենիսի դպրոցի կառուցման աշխատանքների գնման «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով պայմանագիրը կատարվում է սահմանված ժամանակացույցի խախտմամբ:

Պատվիրատուն վերոհիշյալ գրություններով նշել է նաև, որ 17.09.2013թ. դրությամբ Ընկերության կողմից վճարման ներկայացվել են շուրջ 19,3 մլն. դրամ գումարի շինաշխատանքներ, ինչը կազմում է 2013թ. ընթացքում կատարման ենթակա աշխատանքների ամբողջ ծավալի 14,5 տոկոսը:

Պատվիրատուն հայտնել է, որ սեղմ ժամկետներում թերամատակարարումը չլրացնելու դեպքում «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագիրը կլուծվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

«Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև 29.01.2014թ. կնքվել է 31.07.2013թ. «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով պայմանագրի թիվ 2 համաձայնագիրը, որի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված աշխատանքների գինը սահմանվել է 287 283 900 ՀՀ դրամ, իսկ աշխատանքների կատարման համար նախատեսվել են հետևյալ վերջնաժամկետները.

	Ուսումնական	Սկիզբ	Ավարտ

	մասնաշենք (2014թ.)	01.03.2014թ.	01.09.2014թ.
1.	Մարզադպրոցի շինարարական աշխատանքներ	20.03.2014թ.	01.09.2014թ.
2	Ներքին ինժեներական համակարգեր	10.05.2014թ.	20.08.2014թ.
3	Կաթսայատան շինարարական մաս	01.05.2014թ.	01.09.2014թ.
4	Կաթսայատան ջերմատեխնիկական մաս	10.07.2014թ.	01.09.2014թ.
5	Արտաքին ինժեներական համակարգեր	05.06.2014թ.	01.09.2014թ.
6	Բարեկարգում և մետաղական ցանկապատ	20.07.2014թ.	01.09.2014թ.
8	Ընդամենը	01.03.2014թ.	01.09.2014թ.

Կողմերի միջև 23.04.2014թ. կնքված թիվ 7, 06.06.2014թ. թիվ 8, 05.06.2014թ. թիվ 1, 29.07.2014թ. թիվ 2, 03.09.2014թ. թիվ 3, 06.10.2014թ. թիվ 4, 14.10.2014թ. թիվ 9, 18.12.2014թ. թիվ 5, թիվ 10 արձանագրությունների համաձայն «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ն Պայմանագրի շրջանակներում կատարել է ընդհանուր 9 845.22 հազ., 20 769.50 հազ, 6 529.46 հազ., 6 932.44 հազ., 4 275.77 հազ., 11 246.51 հազ., 6 055.22 հազ., 21 199.49, 9 700.06 հազ. ՀՀ դրամ գումարի շինարարական աշխատանքներ:

Միևնույն ժամանակ վերոհիշյալ թիվ 7, 8, 9, 10, 4, 5 հանձնման-ընդունման արձանագրություններով արձանագրվել է, որ Ընկերության կողմից Պայմանագրով նախատեսված աշխատանքներն իրականացվել են սահմանված ժամանակացույցի խախտմամբ:

«Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին ուղղված 26.04.2014թ. թիվ ՀՍ/468-14 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ Պայմանագրի գինը սահմանվել է 132689.37 հազ. ՀՀ դրամ: 2013 թվականին առկա ֆինանսական միջոցների շրջանակներում աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանված եղել 05.12.2013թ., սակայն առ այսօր

ներկայացվել է ընդամենը 93962.664 հազ. ՀՀ դրամ գումարի կատարողական ակտեր, խախտվել է Պայմանագրի ավարտման ժամկետը:

Կողմերի միջև նույն Պայմանագրի հիման վրա 29.01.2014թ. կնքված թիվ 2 համաձայնագրով սահմանված 287283.9 հազ. ՀՀ դրամ գումարի աշխատանքների կատարման վերջնաժամկետ է սահմանվել 01.09.2014թ., սակայն մինչ օրս ներկայացվել է ընդամենը 4275.77 հազ. ՀՀ դրամ գումարի կատարողական ակտեր: Ընկերության կողմից աշխատանքներն իրականացվում են փոքրաթիվ ուժերով, ընդհատվող նյութատեխնիկական մատակարարմամբ: Նման աշխատելաոճը վկայում է աշխատանքները ժամանակին կատարելու անհնարինության մասին:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանն առաջարկել է աշխատանքները կազմակերպել այնպես, որպեսզի սեղմ ժամկետներում ավարտվեն Պայմանագրով նախատեսված աշխատանքներն, այլապես Ընկերության նկատմամբ կկիրառվեն ՀՀ օրենսդրությամբ և Պայմանագրով նախատեսված պատասխանատվության համապատասխան միջոցներ:

ՀՀ կառավարության 18.12.2014թ. N 1451-Ա որոշմամբ «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով Պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2015թ.:

Կողմերի միջև 20.12.2014թ. կնքվել է Պայմանագրի թիվ 3 համաձայնագիրը, որով նախատեսվել է աշխատանքների կատարման նոր ժամանակացույց, մասնավորապես՝

	Ուսումնական մասնաշենք (2014թ.)	Սկիզբ 01.03.2014թ.	Ավարտ 30.06.2015թ.
1.	Մարզադպրոցի շինարարական աշխատանքներ	20.03.2014թ.	30.06.2015թ.
2	Ներքին ինժեներական համակարգեր	10.05.2014թ.	30.05.2015թ.
3	Կաթսայատան շինարարական մաս	01.05.2014թ.	30.06.2015թ.
4	Կաթսայատան ջերմատեխնիկական մաս	10.07.2014թ.	30.06.2015թ.
5	Արտաքին ինժեներական	05.06.2014թ.	30.06.2015թ.

	համակարգեր		
6	Բարեկարգում և մետաղական ցանկապատ	20.07.2014թ.	30.06.2015թ.
8	Ընդամենը	01.03.2014թ.	30.06.2015թ.

Ընկերությանն ուղղված 06.03.2015թ. թիվ ՀՍ/213-15 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ ըստ հաստատված ժամանակացույցի՝ Ընկերության ստանձնած պարտավորությունների կատարման սկիզբ է սահմանվել հերթական թիվ 3 համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրը՝ այսինքն 20.12.2014թ.: Սակայն մինչ օրս օբյեկտի աշխատանքները չեն սկսվել և վտանգվում են ՀՀ 2013-2014թթ. պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացվող ծրագրի կատարման ապահովումը:

Նույն գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ հաշվի առնելով այն հանգամանքը, որ սահմանափակ ժամկետում դեռ կատարման ենթակա են շուրջ 235000.0 հազ. դրամի շինաշխատանքներ, ուստի անհրաժեշտ է հրատապության սկզբունքով դրանց մեկնարկն ապահովել ըստ գործող ժամանակացույցի հաջորդականության:

Կողմերի միջև 01.06.2015թ. կնքված թիվ 6, 09.09.2015թ. թիվ 7, 09.11.2015թ. թիվ 8, 15.12.2015թ. թիվ 9 հանձնման-ընդունման արձանագրությունների համաձայն՝ Ընկերության կողմից աշխատանքներն իրականացվել են Պայմանագրով նախատեսված ժամանակացույցի խախտմամբ:

Ընկերությանն ուղղված 17.06.2015թ. թիվ ՀՍ/669-1 գրությամբ Պատվիրատուն հայտնել է, որ 2013թ. շինաշխատանքների կատարման համար հատկացված 132689.370 հազ. դրամ գումարից կատարվել է 107424.564 հազ. դրամ գումարի աշխատանքներ, մնացորդը կազմում է 25264.806 հազ. դրամ:

2014թ. շինաշխատանքների համար հատկացված 287283.900 հազ. դրամ գումարից կատարվել է 67516.170 հազ. դրամ գումարի աշխատանքներ, մնացորդը կազմում է 219767.720 հազ. դրամ:

Նույն գրությամբ Պատվիրատուն Ընկերությանը նախազգուշացրել է աշխատանքները մինչև սահմանված վերջնաժամկետը՝ 30.06.2015թ., ավարտելու անհրաժեշտության վերաբերյալ:

Նմանատիպ գրություններով Պատվիրատուն Ընկերությանը դիմել է նաև 02.07.2015թ. և 25.09.2015թ.:

Համաձայն գործում առկա կողմերի միջև կնքված 27.05.2016թ. թիվ 10, 04.10.2016թ. թիվ 11, 01.12.2016թ. թիվ 12, 16.05.2017թ. թիվ 13, 17.07.2017թ. թիվ 14 հանձնման-ընդունման արձանագրությունների «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից Պայմանագրի շրջանակներում շինարարական աշխատանքներն իրականացվել են նաև 2016-2017թթ. ընթացքում: Միևնույն ժամանակ վերոհիշյալ արձանագրություններով արձանագրվել է, որ աշխատանքները Ընկերության կողմից իրականցվել են սահմանված ժամանակացույցի խախտումներով, որի վերաբերյալ Պատվիրատուն մի շարք գրություններով նախազգուշացրել է Ընկերությանը:

ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին ուղղված 10.05.2018թ. թիվ 02/16.4/2225-18 գրությամբ հայտնել է, որ ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև 31.07.2013թ. կնքված ՀՀ Արագածոտնի մարզի գ. Վարդենիսի դպրոցի շինարարական աշխատանքների իրականացման թիվ «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» գնման պայմանագրով նախատեսված աշխատանքները սահմանված ժամկետում ամբողջությամբ չեն կատարվել և համաձայն Պայմանագրի 3.1.4 կետի՝ ՀՀ ԿԱ քաղաքաշինության պետական կոմիտեն 11.05.2018 թվականից միակողմանի լուծում է Պայմանագիրը՝ մնացորդային 57456076 ՀՀ դրամ գումարի չափով:

Այսպես՝ Պայմանագրի 3.1.4 կետի «ա» և «բ» ենթակետերի համաձայն ***պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.***

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետ (ներառյալ օրացուցային գրաֆիկ):

Պայմանագրի 1-ին կետի 1.3-րդ ենթակետով սահմանվել է, որ Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են Պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և

(2013թ. առկա ֆինանսական միջոցների շրջանակներում կատարվող) աշխատանքների ժամկետը սահմանվում է 05.12.2013թ. ներառյալ:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «ա» ենթակետը սահմանում է, որ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, ***եթե հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում ավելի քան մեկ անգամ խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորություն, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծարմանը:***

Այսպիսով, հիմք ընդունելով վերոգրյալը, արձանագրում եմ, որ Ընկերությունը թույլ է տվել ՀՀ ՔՆ «Քաղաքաշինական ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի և «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի միջև 31.07.2013թ. կնքված թիվ «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով գնման պայմանագրով նախատեսված պարտավորությունների ավելի քան մեկ անգամ խախտում, որը հանգեցրել է Պատվիրատուի կողմից Պայմանագրի միակողմանի լուծմանը, մասնավորապես՝ Պայմանագրի հավելված N 2-ի համաձայն՝ Ընկերությունը պարտավորվել է Պայմանագրով նախատեսված աշխատանքները ավարտել 05.12.2013թ., որը սակայն չի կատարվել: Այնուհետև ՀՀ կառավարության 18.12.2014թ. N 1451-Ա որոշմամբ «ԲԸԱՀԱՇՁԲ-13/17» ծածկագրով պայմանագրի կատարման ժամկետը երկարաձգվել է մինչև 30.06.2015թ., տվյալ ժամկետը նույնպես «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից չի պահպանվել: Ավելին՝ Պատվիրատուի կողմից Ընկերությանն ուղղված գրություններից պարզ է դառնում, որ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ն չպահպանելով Պայմանագրով նախատեսված ժամկետները, ներկայացրել է մնացորդային աշխատանքների օրացուցային գրաֆիկ, համաձայն որի պարտավորվել է աշխատանքները ավարտել մինչև 30.06.2016թ., այնուհետև մինչև 20.10.2016թ., որոնք նույնպես Ընկերության կողմից չեն պահպանվել:

«Գնումների մասին» ՀՕ 206-Ն օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով նախատեսված՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում մասնակցին ներառելու համար անհրաժեշտ է, որ նույն կետով սահմանված և ***մասնակցին վերագրվող խախտում թույլ տալու պահից մեկ տարվա ընթացքում անձը մասնակցած լինի գնման որևէ գործընթացին և ներկայացրած լինի***

հայտ, քանի որ օրենքի նշված նորմի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե վերագրվող խախտումը կատարվել է հայտը ներկայացնելու պահին նախորդող տարվա ընթացքում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործում առկա չէ որևէ տեղեկատվություն «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ի կողմից խախտումը թույլ տալու օրվանից՝ 11.05.2018թ., հաշված մեկ տարվա ընթացքում հայտ ներկայացնելու վերաբերյալ, ուստի գտնում եմ, որ ՀՀ ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10270-18 գրությամբ ներկայացված «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքեր առկա չեն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 07.06.2018թ. թիվ 03/26-3/10270-18 գրությամբ «Սպիտակ Կամար» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 00250089) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ՄՀԵՐ ԱՆԱՆՅԱՆ**